ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«25» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Ալիխանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

-հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 8-րդ օրվա (21.10.2021թ.)՝ ժամը 10:00-ն,

-հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,

-էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 22.10.2021 թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է ընթացակարգը կազմակերպելու տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված մեկ միավոր գները.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Նմանատիպ ապրանքի մեկ միավորի ձեռքբերման գինը (ՀՀ դրամ)	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1.	Նամակի ծրար, A5 ձևաչափի	15	2400000
2.	Նամակի ծրար, A4 ձևաչափի	24	1440000
3.	Նամակի ծրար, A3 ձևաչափի	47.40	1232400
4.	Ծրար (Eurostandard)	8	4080000
5.	Դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	80.67	3307470

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
Ֆորտունա սիթի ՍՊԸ	ք. Գորիս, Տաթևացի 31/1
Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	ք. Գորիս, Մ. Խորենացու 24
Սմարթլայն ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 110
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30
Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	ք. Երևան, Բաղրամյան 24/2

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	Արժեք (ՀՀ դրամ)	ԱԱՀ	Գին (ՀՀ դրամ)	
1	Ֆորտունա սիթի ՍՊԸ	2880000	0%	2880000	2400000	0%	2400000.00	
1	Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	2720000	20%	3264000	2720000	20%	3264000.00	Մերժված
1	Սմարթլայն ՍՊԸ	3733333.34	20%	4480000	3733333.34	20%	4480000.00	Մերժված
2	Ֆորտունա սիթի ՍՊԸ	1680000	0%	1680000	1440000	0%	1440000.00	
2	Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	1620000	20%	1944000	1620000	20%	1944000.00	Մերժված
2	Սմարթլայն ՍՊԸ	1750000	20%	2100000	1750000	20%	2100000.00	Մերժված
3	Ֆորտունա սիթի ՍՊԸ	1300000	0%	1300000	1232400	0%	1232400.00	
3	Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	1274000	20%	1528800	1274000	20%	1528800.00	Մերժված
3	Սմարթլայն ՍՊԸ	1516666.67	20%	1820000	1516666.67	20%	1820000.00	Մերժված
4	Ֆորտունա սիթի ՍՊԸ	4590000	0%	4590000	4544100	0%	4544100.00	Մերժված
4	Ա/Ձ ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ	4590000	20%	5508000	4590000	20%	5508000.00	Մերժված
4	Սմարթլայն ՍՊԸ	5950000	20%	7140000	5950000	20%	7140000.00	Մերժված
5	Էյչ Գրուպ ՍՊԸ	2757250	20%	3308700	2757250	20%	3308700.00	Մերժված
5	Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ	2764083	20%	3316899.6	2764083	20%	3316899.60	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդը ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 22.10.2021թ.՝ ժամը 10:32-ին, և 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Ֆորտունա սիթի ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

Ֆորտունա սիթի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Ֆորտունա սիթի ՍՊԸ

-ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

-ներկայացված հայտում առկա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը (Հավելված N 1.2) (այսուհետ՝ հայտարարագիր) մասնակցի կողմից հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև հայտարարագրում

• «1.1.4. Գրանցման օրը, ամիսը, տարին» ենթաբաժնում՝ լրացված տեղեկատվությունը հստակեցման կարիք ունի.

• «2.7. Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (բացառությամբ՝ ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների)» ենթաբաժնի «2.7.1. Մասնակցության չափը (%)» դաշտում նշված է կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ, սակայն «ա» կետում, ինչպես նաև «2.7.2. Մասնակցության տեսակը» դաշտում որևէ նշում կատարված չէ.

• «2.9. Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնի «2.9.2. Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացումը» դաշտում կատարված չէ նշում իրական շահառուի կողմից կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ.

-1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2021թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի քարտուղարին.

Ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի, ինչպես նաև՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 8.11 կետի պահանջներով՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **հոկտեմբերի 26-ը ներառյալ** Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝ Տիգրան Զեյնալյան

Արուս Խաչատրյան